

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՀԵՂՄԱՄԲ
ԿԱՏԱՐՈՒՄ Է ՋՐՕՐՀՆՅԱՑ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

# ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին նշեց Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Հայտնության տոնը:

Հունվարի 5-ին Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Հոգևշնորհ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը:

Մինչ Ս. Պատարագի սկիզբը, Ճրագալույցի գիշերային ժամին հոգևորականները զգեստավորված, «Ուրախացիր Սրբուհի» հոգևթով շարականի հնչյունների ներքո և-կան եկեղեցու այլան, այս, խնկարկելով հավատացյալ ժողովրդին, հայտնեցին ծննդյան ավետիսը: Ընթերցվեցին Քրիստոսի Ծննդյան դրվագները ներկայացնող ավետարանական հատվածներ՝ ժողովրդին տալով Տիրոջ Ծննդյան ավետիսը: Ավագ Ս. Սեղանի վարագույրի փակվելուց հետո, պատարագիչ Հայր Սուրբը բարձ-րացավ Ավագ Խորան՝ զգեստավորվելու: Այդ ընթացքում Բարեշնորհ սարկավագ-ներն ընթերցեցին Դանիել մարգարեի թուղթը:

Մայր Աթոռի քաղցրալուր զանգերի ղողանջների և հրեշտակային ավետաբեր երգեցողության հնչյունների ներքո եկեղեցում համախմբված հավատացյալ բարե-պաշտ հայորդիներին և ամբողջ հայությանը տրվեց Կուսածին Աստծո՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Գալստյան կենարար ավետիսը:

Պատարագից հետո Մայր Տաճարից հոգևորականաց թափորը, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, առաջնորդվեց Վեհարան՝ կատարելու Տնօրհնեքի արարողությունը, որից հետո Վեհափառ Հայրապետին մեկ առ մեկ մոտեցան միաբաններն ու Ճեմարանի սաները, համբուրեցին Նորին Սրբության Օծյալ Աջը, Վեհափառից առնելով Սուրբ Ծննդյան ողջույնը՝ «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս», որին ի պատասխան հնչեց՝ «Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»:

Հավարտ Ճրագալույցի արարողության, հնավանդ սովորույթի համաձայն, թա-փորն առաջնորդվեց Մայր Աթոռի սեղանատուն՝ Ճրագալույցի ընթրիքի:

Հաջորդ օրը, Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առթիվ Սուրբ և ան-մահ Պատարագ մատուցեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը: Պատարա-գին ներկա էին ՀՀ Նախագահը, ԱԺ-ի խոսնակը, ՀՀ վարչապետը, կառավարութ-յան անդամներ և այլ հյուրեր:

Վեհափառ Հայրապետին Պատարագի ընթացքում սպասարկում էին առընթե-րականներ Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը և Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, ինչպես նաև Հոգեշնորհ Հայր Սուրբեր և Բարեշնորհ սարկավագներ:

Հրեթացս Պատարագի Նորին Սրբությունը Ս. Ծննդյան օրհնությունը և հայրա-պետական իր պատգամը հղեց համայն հայությանը (տե՛ս էջ 3):

Պատարագից անմիջապես հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Աստվածորդու՝ Հիսուս Քրիստոսի մկրտությունը խորհրդանշող Ջրօրհնյաց հանդիսավոր արարողությունը: Հայոց Հայրապետը, հոգևորականաց դասի և հավատավոր ժողովրդի հետ միաբուխ աղոթք բարձրացնելով առ Աստված, աղաչեց մարդասեր Տիրոջը, որ Միածնի առատաբուխ շնորհներով այդ ջրին տա հորդանանյան օրհնությունը՝ իջեցնելով Ս. Հոգին ջրի վրա, որպեսզի սրբազան ջրով մկրտվողները լինեն լույսի որդիներ: Այնուհետև Հայոց Հայրապետը խաչն իջեցրեց ջուրը, ապա հանելով՝ ջուրն օրհնեց Ս. Խաչի նշանով, Կենարար Մյուռոնով և Ավետարանով:

Օրհնված ջուրը բաժանվեց հավատավոր հայորդիներին, որոնք այն տարան իրենց տները՝ զանազան հոգևոր և մարմնավոր հիվանդություններ բուժելու:

Արարողությունից հետո Վեհափառ Հայրապետի կողմից տրվեց ճաշկերույթ, որին Մայր Աթոռի հոգևորականաց դասի հետ մասնակցեցին ՀՀ Նախագահը, Վարչապետը, կառավարության անդամներ, Հայաստանում հավատարմագրված դեսպաններ, ինչպես նաև օտարերկրյա այլ հրավիրյալներ:

*ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ*